Օգոստ. 15–ին, դաշնագիրն ստորագրելու առթիւ, հանդիսաւոր մաղթանք տեղի ունեցաւ Փարիզի եկեղեցում և ճաշից յետոյ, ժամը 4–ին, պաշտօնական ընդունելութիւն մեր Պատուիրակութեան շինութեան մէջ: Շատ մեծ բազմութիւն հաւաքւեց տօնելու համար համազգային մեծ օրը՝ ճառեր ու բանաստեղծութիւններ արտասանւեցին, հայրենասիրական երգեր երգւեցին ի պատիւ Ադամ և Անկախ Միացեալ Հայաստանի»:

Սևրի դաշնագրի ստորագրութեան առթիւ ժողովներ ու հանդէսներ եղան և Հայաստանում, ուր նոյնպէս «ճառեր ու բանաստեղծութիւններ արտասանւեցին» և «հայրենասիրական երգեր երգւեցին», բայց այնտեղ շուտով պիտի երգէին և ուրիշ երգեր: Նշաններն արդէն երևում էին...

լինի, չհագեցուած պետութիւնները չկարողանան հասնել, ընդհանուր համաձայնութեամբ, իրենց սահմանների որոշման, վերջինս կորոշի գլխաւոր դաշնակից պետութիւնների կողմից, որոնք միաժամանակ պէտք է հոգ տանեն անցկացնելու այն տեղում:

Յօդ. Հայաստանը ընդունում է, համաձայնելով մտցնել դաշնագրի մէջ գլխաւոր դաշնակից պետութիւնների հետ՝ այն որոշումները, որ այդ պետութիւնները անհրաժեշտ կը դտնեն՝ պաշտպանելու համար Հայաստանում շահերը այն բնակիչների, որոնք մեծամասնութիւնից տարբերւում են ցեղով, լեզուով կամ կրօնով:

Հայաստանը համաձայնւում է, հաւասարապէս, մտցնել դաշնագրի մէջ գլխաւոր դաշնակից պետութիւնների հետ այն որոշումները, որ այդ պետութիւնները անհրաժեշտ կը դտնեն՝ պաշտպանելու համար Թրանզիտի ազատութիւնը և արդար իրաւակարգը ուրիշ ազգերի առևտրի համար»: